

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՈՒՄԸ ԵՒ ՇԱՄԱԽՈՒ ՂԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ

Հալըիկը օծւեց, ամեն մի հալ զղացւեց, ուրախացաւ և ալզ ուրախութիւնը ամեն մէկը մի եղանակով լալտնեց, ի՞նչ էին մտածում բողոքական հալերը ահա ժամանակ, երբ հալ ժողովուրդը շարժւած, վառւած էր. ահա մի հետաքրքրական երևույթ, որի մասին քիչ կը պատմենք մենք. Բողոքական հալերը, մտածում էի ես, չեն կարող չցաւել, չուրախանալ ահա ժամանակ, երբ ցաւում կամ ուրախանում է ազգը. ուրեմն ալժամ երբ ցնծում է հալ ժողովուրդը, պէտք է որ բողոքականներն էլ յոյցեր անեն արժանաւորին արժանաւոր կերպով ողջունելու համար:

Անհրաժեշտ է, մտածում էի ես, կովկասու բողոքական համալնքի կողմից մի պատգամաւոր ուղարկել օծմանը կամ մի ալ կերպ լալտնել մեր ուրախութիւնը: Միւս կողմից քաջ ծանօթ լինելով թէ ինչպէս Շուշաչ հալ բողոքականները կարդում էին Հալըիկի գրքերը, ինչպէս համակրում, սիրում էին նրան, համոզւած էի որ եթէ Շամախու բողոքականներն էլ միանան սրանց հետ, չետոյ կարելի էր սպասել որ կովկասու բոլոր բողոքականները կը միանան սրանց հետ և ապա մենք հասած կը լինենք մեր նպատակին:

Սեպտեմբերի սկզբներում Շամախի էի. կիրակի օրը քարոզը վերջանալուց չետոյ խնդրեցի ժողովքից, եթէ կարելի է, թող տան ինձ մի առաջարկութիւն անել:

Համաձայնութիւն ստացալ և ապա սկսեցի պարզել եղբայրութեան և հալ ժողովրդի բաժանւած տարրերի փոխադարձ սիրոյ կարևորութիւնը, աշխատեցի ապացուցանել բաժանման, ատելութեան կորստաբեր հետևանքը, բարբարոս ինկւիզիտորների չարահար սխալները և ապա մօտեցալ բուն խնդրին. չմոռացալ ալտեղ վիշել ահա ուրախութիւնը, որով ընդունեց ինձ Հալըիկը Թիֆլիզում, երբ լալտնեցի ես Շուշաչ բողոքականների համակրանքը դէպի նա: Ամբողջ խօսակցութեան ժամանակ աշխատում էի մտրակել, աղդել, համոզել:

Ես վերջացրի ժողովրդից մի քանի աղնիւ անհատներ բառակա-

նութեան ցոյցեր արին, և մենք դուրս եկանք սրահը, ուր տեսարանը բոլորովին փոխւեց: Աւտոնդ հաւաքւած էին քարոզիչը, ուսուցիչը և ուրիշ շատեր: Եւ մօտեցաւ քարոզչին և բռնելով նրա ձեռք՝ հարցրի թէ նա ինչ է մտածում իմ առաջարկութեան մասին:

— Ես, ասաց նա բարկացած, չեմ ուզարկիլ ոչ մի պատգամատուր և եթէ մէկը հարցնի՝ կասեմ չպէտք է ուղարկել, որովհետեւ մենք ջոկ բան ենք, նրանք (լուսաւորչականները) ջոկ բան են:

— Եթէ մենք «ջոկ բան» ենք, կտրեցի նրա խօսքը, ապա թուրքերը աւելի ևս ջոկ բան են. եթէ նրանք ներկայացուցիչ են ուղարկում՝ միթէ ամօթ չէ մեզ, բողոքականներս, ոչ մի ցոյց էլ չանել:

— Թուրքերը իրանց արածը չեն հասկանում, իսկ քրիստոնեային չի վաւելիլ քաղաքականութիւն անել. մարդ պէտք է Լուծերի նման լինի, ոչ մի կողմ չծախ:

— Ասացէք խնդրեմ, պատուի քարոզիչ, հարցրի ևս, Պօղոս առաքեալը որ խիստ հակառակ էր թլպատութեան՝ ինչու իր ձեռքերովը թլպատեց Տիմոթէոսին. սա քաղաքականութիւն էր թէ չէ:

Երկար մտածեց մեր աստածաբանը, մտածեց ու խնդրեց որ ես պատասխանեմ իմ հարցին, և ինքը խնդրից խօս տալու համար՝ չփոխեց խառնեց խնդիրը ու սկսեց Հալլիկի խօսքերից քաղածներ անել:

— Եթէ նա քրիստոնեայ է, ասաց նա, ապացած, ինչու է իրան համար երկար կեանք խնդրում, մինչդեռ առաքեալը ուղում էր շուտ մեռնել:

— Պատուելի քարոզիչ, ասացի ես, նախ հարց չկալ թէ Հալլիկը քրիստոնեայ է թէ չէ. երկրորդ, եթէ ձեզ համար ալ խօսքերը գալթակցեցուցիչ են, ապա թերթեցէք Աւետարանը և դուք կը տեսնէք որ իւր մահը ուզող Պօղոս առաքեալը ասում է. «մեռնելս ինձ չա՛ն է, մնալս ձեզ օգուտ»: Ահա միեւնոյն խորհուրդը ունին և Հալլիկի խօսքերը:

Ես դարմանում էի, երբ տեսնում էի որ մի հինգ բոլե առաջ ամբիոնից մեզմ ձաջնորի ելնէջով խօսող համբերութեան, սիրոյ, խաղաղութեան առաքեալը փոխւել կրակ էր դառել, նրա գոնը փախել էր, ձաջնը դողդողում էր, դառան մորթու տակից զալլի առամներ էին երևում:

— Եթէ դուք հոգեւոր մարդ էք, քարոզ տւէք՝ մենք էլ լսենք, ասաց մեր ջերմեւանդ հոգեորականը. ինչ դործ ունի եկեղեցին կաթողիկոսի հետ:

Ես, տեսնելով թէ նրա խօսքերի մէջ տրամաբանութիւն չկայ, ուղում էի թողնել վէճը, բայց ալդ ժամանակ մի ուրիշը սկսեց, բայց աւելի ևս սոցեղ, աւելի անհամ եղանակով, որի մէջ կար և իրոնիա, և ծաղր, և ծիծաղ:

— «Աղէք նա լաւ մարդ ա, ինքը մեղի շուռ կիգալ, կիքիթանա, (թէ որ նա լաւ մարդ է, ինքը մեղ կ'որոնէ ու կը դռնէ), ասաց մեր հոգաբարձուն Շամախու բաւբառով:

—Այստեղ լաւ ու վատի վրայ խօսք չկալ, ասացի ես, ալստեղ կորածի ու գտնւածի վրայ խօսք չկալ, մեր կողմից մի ողջուն, մի շարժում է հարկաւոր օծման օրը. ահա բուն խնդիրը:

Դէ հէնց ասըմես, ալ իսրայէլ, կտրեց իմ խօսքը մի ուրիշը հոգաբարձոներից, դէ տեսնանք՝ ազէր նա (Հալիկը) կարացաւ ան խնչոցը (քշոցը) փոխել:

—Ի՛նչ անհիմն բաներ էք խօսում, եղաւ իմ պատասխանը, մեր ինչ գործն է թէ՛ նա ինչ կը փոխէ և ինչ կը թողնէ. թողէք ձեր հակառակու-թեան, ինքնահաւանութեան փթած հոգին, ընթացէք ժամանակի հետ առաջ, ասացի ես:

Ես պատրաստ էի քար ու քանդ անել սրանց բորբոսնած շահախնդ-րութեան ոստալնները, բայց ալդ ժամանակ մէկը ետքիցս ձեռքս սեղմեց, սրանով երկչոտ գերին ուզում էր ասել՝ «Թէն քո ասածները ճշմարիտ են, բայց չի կարելի ասել, որովհետեւ...» Նթէ մի մարդ կար, որ նոր հարսի նման անխօս էր մեր խօսակցութեան ժամանակ, սա մեր բողոքականների նոր սերնդի ղեւական կրթութեան գործով պարապող մանկավարժն էր, որը կանգնած մեր առաջ տանջւում էր և կարծես իր մտքում ասելիս լինէր ալն թրքական առածը թէ՛ «վերև եմ թքում պէխեր է, ներքև եմ թքում» միւրուք է»։ Հացի խնդիրը կշռի աչքումն էր, ճշմարտութիւնը՝ միւս աչքում, Վերջը նիւթը զաղափարից ծանր եկաւ, մեր ուսուցիչը մունջ մնաց մինչև վերջը: Սիրոյ և հաշտութեան վկան խռոված հեռացաւ:

Միւս օրը սկսեցի ես համոզել երիտասարդութեանը, որի վրայ է մի-ալն մեր լուսը: Ես, ճշմարիտն ասած, ասելի զաւրացած էի մի ուրիշ ասելի տգեղ երևութի վրայ: Բանը նրանումն է որ բողոքականները ունե-նում են իրանց զպրոցում 40-ի չափ լուսաւորչական երեխաներ: Սրիկա-ներից մէկը մի գիշեր կամենում է ալրել բողոքականների ժողովարանը, որը սակալն չի լաջողւում. և ահա վերջինները հաւաքւում են, խելք խելքի են տալիս և ալս չարութեան առաջն առնելու միակ միջոցը նրանումն են գտնում թէ՛ պէքս է լուսաւորչականների զաւակները զպրոցից վաճղել, ու ահա դուրս են անում 40-ի չափ երեխաներ: Սա խօ վատ բան չէ. համ վրէժ է, համ զգուշութիւն, համ էլ ուսուցիչների համար թեթեւ-թիւն... Այս բաւական չէ, դեռ լանդգնում ենք ասել թէ՛ մենք, բողոքա-կաններս, «աղ և լուս» ենք:

Անցաւ ալս անցքից երեք օր, և ահա եկաւ Շամախի Մոսկալի լու-թերական կոնսիստորալի անդամ գեներալ սուպեր-ինտենդենտը: Մի գիշեր միալն քարոզեց պ. սուպեր-ինտենդենտը. նա չկարողացաւ թաղցնել ալն մատ-նութիւնները, որ օր առաջ արել էին մեր «ոչ-քաղաքական» բողոքական-ները. նա չեշտում էր թէ՛ պէտք է հալրական կրօնը (ի հարկէ լութերա-կանը) պինդ պահել, ամեն հոգու չհաւատալ և ուրիշների ետքից չդնալ:

Միւս օրը ժողով կազմեց հոգաբարձուներից և եկեղեցու գործունեակ անդամներից: Ժողովին նախագահում էր վիզիտատոր զ. սուպերինտենդենտը, և դուք պիտի տեսնէիք թէ մեր քաղաքականութիւն չսիրող քարոզիչը և իր արքանականները ինչ օլիւններ էին խաղում: Շատերից մէկը միայն:

Հասարակավարչական ընտրութեան, ել ու մուտքի և դպրոցի գրութեան հաշիւը պահանջելիս աշնպէս դուներ էին քսում, աշնպէս կեղծում էին, որ ես համոզւած եմ թէ հէնց ինքը վիզիտատորը զգուս էր:

— Ի՞նչպէս է եկեղեցու բարոյական վիճակը, հարցրեց վերջապէս վիզիտատորը ժողովից:

— Շատ վատ է, ասացի ես:

— Ոչ, շատ վատ չէ, ու չի կարելի մեր եկեղեցու համար ալսպէս ասել, գոռաց վիզիտատորի մօտ կանգնած քարոզիչը:

— Այստեղ նստածներս բոլորս էլ լաւ ենք, կրկնեց հոգաբարձուններից մէկը նեղացած, մինչև անգամ պոլիցիան (ոստիկանութիւնը) մեղանից շնորհակալ է:

— Այդ ոչինչ, ասաց փաստոր (բողոքականների քահանայ) Հանգէնը, պէտք է Աստուած ձեզանից շնորհակալ լինի և ոչ թէ ոստիկանութիւնը:

— Ի՞նչ ասես չկա՞ մեր մէջ, ասացի ես զաւրացած՝ հարբեցողութիւն-պոռնկութիւն, խաբէութիւն, կեղծաւորութիւն և ալն և ալն:

— Այդ՝ երիտասարդներն են որ ալստեղ չեն, մեր ալստեղ նստածներումս ալսպէս բաներ չկալ, ասաց հոգաբարձուներից մէկը:

Ես, զաւրացած ալդ երեւութի վրայ, ցոյց եմ տալիս ժողովրդի բարոյական սնանկութեան վրայ, բացում եմ նրա ծածկւած կեղտը, նրա խաւտառակ խարդախութիւնը և պահանջում եմ որ միջոցներ ձեռք առնենք ալդ վարակիչ և կորստաբեր հստանքի առաջն առնելու համար:

Ալդ ժամանակ փաստորը մի ինչ-որ բան փախում է վիզիտատորի ականջին, և առանց խղճահարեւելու, ասում է հրապարակաւ թէ՝ «ժողովքում իրաւունք ունին միայն հոգաբարձուները խօսելու», մինչդեռ քիչ առաջ հէնց ինքը բոլորին իրաւունք էր տւել խօսելու ինչպէս էլ լինի, շատ ստերի հետ մտաւ արձանագրութեան մէջ նաև ալն թէ Շամախու լութերական եկեղեցու հոգևոր վիճակը շատ լաւ է: Թուղթը կուղարկւի ի հարկէ Մոսկւայի կոնսիստորիալին, գերմանացիք կը նախանձն տեսնելով թէ ինչպէս Շամախու հպերը բարոյական են, սուրբ են, հրեշտակ են: Սրանից աւել էլ ինչ էք ուզում. ամեն բան իր տեղն է, ամենքն էլ գոհ են, պրծաւ գնաց:

Աւելի ցաւալին ալն է, որ ալդ բոլորը կատարում է աղօթքով և կաթողիկոսին ողջունելը մեղք համարող, քաղաքակրթութիւն չսիրող քրիստոնեաների ձեռքով:

Մենք թշնամի չենք բողոքականներին, բայց և անհաշտ թշնամի ենք կեղծութեան, խաւարի, խարդախութեան. և անշուշտ պիտի լաղթենք, որին ապացուց է Շամախու. 15 բողոքական երիտասարդների կողմից Էջմիածին ուղարկած շնորհաւորական հեռագիրը, ժողովքում եթէ չթողին խօսելու, մենք խօսելու տեղ կը գտնենք, ասեցինք մենք. և կասինք որ Շամախու և Բաքաւ բողոքականների մէջ երգը, աղօթքը, քարոզը նոյն մեռած ձևականութիւնն է, ինչ որ ամենահին եկեղեցիներինը, նրա հոգևորականները նոյն անհամ չինոյնիկներն են ինչպէս և շատ ուրիշ եկեղեցիներինը, որի դէմ բողոքում են իրանք:

Ի. ՄԱՐԿՈՍԵԱՆՑ